

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՍՎԱՍԱՐԱՆ

### **ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱԼԵՐԻԻ**

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵջ  
ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ  
ՄԻՋՈՑՈՎ

ԺԳ.00.03-«Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ  
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

Աստենախոսության թեման հաստատվել է Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական դեկանար՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ռ.Ն. Ազարյան**

Պաշտոնական ընդիմականություն՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Լ.Ա. Սահակյան**

Առաջատար կազմակերպություն՝

Ֆիզիկական կուլտուրայի Հայկական Պետական Ինստիտուտ

Աստենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թվականի ապրիլի 10-ին՝ ժամը 14:00-ին, Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գրքող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ-ի մարտի 10-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ՝



**Ա.Կ. ՍՎԱԶՅԱՆ**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Հայտնի է, որ տեսողության խորը կամ մասնակի խանգարումները զգալիորեն դժվարացնում են տարածության մեջ կողմնորոշումը: Այդ պատճառով չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման կարողության և հմտության ծևավորման և զարգացման ուղիների որոնումը միշտ է եղեւ է մասնագետների ուշադրության կենտրոնում: Այս խնդիր տարբեր տեսանկյուններ լուսաբանվել են Ի.Վ. Տինովսկու (1967), Լ.Ա. Սեմյոնովի (1989), Դ.Մ. Սալլակի (1995), Ռ.Ն. Ազարյանի (2008) և այլոց աշխատություններում: Այս և մի շարք այլ հեղինակներ ընդգծում են տեսողության խագարումներով երեխաների տարածական կողմնորոշման զարգացման գործընթացում շարժախաղերի բացահիկ կարևոր դերն ու նշանակությունը: Սակայն մինչ այժմ այս խնդիրի շատ հարցեր դեռ ուսումնասիված չեն: Այս խնդիրի տեսական և գործնական ոչ բավարար մշակվածությունը զգալիորեն դժվարացնում է տարածական կողմնորոշմանը նպատակառուղղված շարժախաղերի անցկացումը տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում: Այս աշխատանքները դժվարանում են նաև այն պատճառով, որ ոչ բոլոր վարժություններն ու խաղերը կարող են հավասարաչափ կիրառվել հատուկ դպրոցում: Հանրակրթական դպրոցներում օգտագործվող մեթոդները ոչ միշտ են կիրառելի չտեսնող և թույլ տեսնող երեխաների հետ իրականացվող աշխատանքներում, քանի որ նրանք դժվարանում են վերահսկել սեփական և այլ անձանց գործողությունները (Բ.Յ. Ճենիսկինա, 1997): Այդ պատճառով շարժախաղերի բնույթի և բուվանդակության, դրանց միջոցներով տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման զարգացման նախադրյալների ուսումնասիրումը, տվյալ խնդիրի վերաբերյալ ուսուցիչների և դաստիարակների տեղեկացվածության մակարդակի որոշումը, չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման զարգացմանը նպատակառուղղված շարժախաղերի փորձարարական մշակման հիմքը հանդիսացան:

Այսպիսով, հետազոտվող խնդիրի տեսական և գործնական անբավարար մշակվածության հանգամանքը մեծացնում է տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոցներում տարածական կողմնորոշման զարգացման համար նախատեսված շարժախաղերի կիրառման դժվարությունները, այս աշխատանքի կազմակերպման և անցկացման մանկավարժական միջոցների ընտրությունը:

Ենելով վերոիիշյալից՝ կարող ենք հավաստել, որ տեսողության խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների տարածական կողմնորոշման զարգացումը շարժախաղերի միջոցով խիստ արդիական է, քանի որ դրանք նման անձանց համար մանկավարժական, սոցիալ-հոգեբանական կարևոր նշանակություն ունեն: Սույն փաստարկն ավելի է ընդգծում հետազոտության արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը:

**Հիմնահարցի մշակվածության աստիճանը:** Տեսողության խանգարումներով երեխանների տարածական կողմնորոշման հիմնահարցը միշտ էլ գտնվել է մանկավարժների և հոգեբանների ուշադրության կենտրոնում։ Մի շարք գիտնականներ (В.С. Сверлов, 1951; М.И. Земцова, 1973; Л.А. Семенов, 1987; Л.И. Солицева, 1997; Н.О. Рубцова, 1998; Р.Н. Азарян, 2009; Л.И. Плаксина, 2012; Е.Н. Подколозина 2013), ինչպես նաև հայ մասնագետներ (Հ.Ռ. Ակուտյան, 2007; Ռ.Ն Ազարյան., 2008; Մ.Կ. Մարության, 2008; Ռ.Տ. Սաֆարյան, 2009; և ուրիշներ) ուսումնասիրել են տեսողության խանգարումներով նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխանների ուսուցման և դաստիարակության բազմակի հարցեր։ Այս ամենով հանդերձ այսօր առկա է հիմնախմնդրի վերաբերյալ ոչ բավարար մշակվածություն, մասնավորապես ուսումնասիրված չէ տեսողության խանգարումներ ունեցող երեխանների հատուկ դպրոցում տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացման մոտեցումները, որոշված չէ այս հարցերի վերաբերյալ ուսուցիչների և դաստիարակների տեղեկացվածության մակարդակը, մշակված չեն այդ երեխանների տարածության մեջ կողմնորոշվելու կարողության ծևակորման տեսական տեսանկյունները, միջոցները, մեթոդները, պայմանները։ Այս հարցերի լուծումը կնպաստի տվյալ հիմնախմնդրի մասնակի լուծմանը։

**Հետազոտության օբյեկտը** տեսողության խանգարումներով երեխանների տարածական կողմնորոշման զարգացման գործընթացն է։

**Հետազոտության առարկան** տեսողության խանգարումներով երեխանների տարածական կողմնորոշման զարգացման շարժախաղերի անցկացման միջոցներն ու մեթոդներն են։

**Հետազոտության վարկածը:** Ենթադրվում է, որ տեսողության խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների տարածական կողմնորոշման զարգացումը շարժախաղերի միջոցով առավել արդյունավետ կլինի, եթե կիրառվեն։

- շարժախաղերում առարկաների հետ տարբեր գործողություններ,
- շարժախաղերում ձայնային կողմնորոշչներ,
- խաղային գործողություններ մարզասարքերի և հատուկ սարքավորումների վրա։

**Հետազոտության նպատակն է** մշակել տեսողության խանգարումներով երեխանների տարածական կողմնորոշման կարողության զարգացմանը նպատակամիտված շարժախաղերի կիրառման միջոցները և մեթոդները։

Ելնելով հետազոտության նպատակից, օբյեկտից, առարկայից և վարկածից՝ մեր կողմից առաջարկվել են հետևյալ **խնդիրները.**

1. ուսումնասիրել տեսողության խանգարումներով երեխանների տարածական կողմնորոշման զարգացման ժամանակակից մոտեցումները,

2. ուսումնասիրել տեսողության խանգարումներով երեխանների տարածական կողմնորոշման զարգացման մակարդակը,

3. մշակել տեսողության խանգարումներով երեխանների տարածական կողմնորոշման զարգացմանը նպատակառուղված շարժախաղերի կիրառման

միջոցներ, մեթոդներ, և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

**Հետազոտության տեսական և մեթոդարանական հիմք են հանդիսացել հետևյալ հիմնական գիտական սկզբունքներն ու դրույթները, որոնք հաստատվել են ընդհանուր և տիֆլոնանկավարժության բնագավառում, մասնավորապես՝**

- Անձի զարգացման և ձևավորման առաջատար գործունեության մասին տեսություն (Ա.Ի. Լեոնյան, 1977)
- Գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսություն (Պ.Յ. Գալյուպերին, 1976; Մ.Մ. Եղիշյան, 1985; 1988)
- Զարգացնող ուսուցման տեսություն (Դ.Բ. Էլեկոնին, Վ.Բ. Դավայդով, 1966)
- Փոխհատուցման տեսություն (Լ.С. Վայոտսկի, 1983; 2003)
- Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության տեսություն (Մ.Ի. Զեմչովա, 1956; Լ.Ի. Սոլիցևա, 1980; Բ.Կ. Տյոոհոգով, 2004; Ռ.Ի. Ազարյան, 2008):

Դրված խնդիրների լուծման համար ընտրվել և կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները**.

- հատուկ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն,
- ուսուցիչների և դաստիարակների մանկավարժական աշխատանքի առաջատար փորձի ուսումնասիրում և վերլուծություն,
- հետազոտվողների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծություն,
- հոգեբանամանկավարժական հետազոտման մեթոդներ՝ դիտում, գրույց, հարցում, ամկետավորում,
- սոուգոլական փորձարկումներ, թեստավորում,
- մանկավարժական գիտափորձ հաստատող, ուսուցանող,
- մաթեմատիկական վիճակագրական մեթոդ:

#### **Հետազոտության գիտական նորույթ.**

• ուսումնասիրվել և սահմանվել են տեսողության խանգարումներով երեխաների շարժախաղերի միջոցներով տարածական կողմնորոշման զարգացման նախադրյալները,

• սահմանվել է տեսողության խանգարումներով երեաների հատուկ դպրոցում կիրավող շարժախաղերի հիմանական ուղղվածությունը, բնույթը և բովանդակությունը,

• բացահայտվել է տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման զարգացման նպատակով կիրավող շարժախաղերի կազմակերպման և անցկացման հարցերի վերաբերակ ուսուցիչների և դաստիարակների տեղեկացվածության մակարդակը,

• մշակվել են տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման զարգացմանը նպատակառությամբ շարժախաղերում տարբեր

առարկաների, ձայնային կողմնորոշչների, մարզասարքերի և հատուկ սարքավորումների կիրառման մոտեցումները:

**Հետազոտության տեսական նշանակությունը** շարժախաղերի բնույթի և բովանդակության տեսական վերլուծության, տեսողության խանգարումներով երեխաների շարժախաղերի միջոցներով տարածական կողմնորոշման զարգացման համար առաջարկվող մոտեցումների արդյունավետության, ինչպես նաև հետազոտության ստացված արդյունքների տեսական հիմնավորումն է:

**Հետազոտության գործնական նշանակությունը** տարածական կողմնորոշման զարգացմանը նպատակամիտված շարժախաղերի միջոցով տեսողության խանգարումներով կրտսեր դպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների զարգացման աշխատանքների բովանդակության, կիրառման մերօդների և պայմանների գործնական մշակումն ու դրանց ներդրումն է մանկավարժական գործընթացում:

Անցկացված հետազոտության արդյունքում առաջարկվել են մերժական հանձնարարություններ՝ շարժախաղերի կազմակերպման և անցկացման ընտրությամբ, առարկաներով, հատուկ մարզասարքերի և ձայնային կողմնորոշչների կիրառմամբ, որոնք ուղղված են տեսողության խանգարումներ ունեցող երեխաների տարածական կողմնորոշման զարգացմանը:

Աստեղախոսության նյութերը, տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման զարգացման և շարժախաղերի կազմակերպման ու անցկացման նպատակով, կարող են օգտագործվել տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոցի, ինչպես նաև ներառական կրթություն իրականացնող դպրոցների մանկավարժական անձնակազմի կողմից: **Հետազոտության հիմնական դրույթները,** հետևողությունները և արդյունքները, մասնագիտական սենյակների, վերապատրաստման և դասախոսությունների մշակման նպատակով, կարող են հիմք հանդիսանալ ինչպես Խ.Արովյանի անվան հայկականպետական մանկավարժական համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետի դասախոսների, այնպես էլ՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի «Կինեզիոլոգիայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի» ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող նոր հետազոտությունների և գործնական փորձի ներդրման համար:

**Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.**

1. տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման զարգացմանը նպատակամիտված շարժախաղերի անցկացման բովանդակությունը, մանկավարժական մոտեցումներն ու պայմանները,

2. շարժախաղերի ժամանակ տարբեր տեսակի առարկաների, ձայնային կողմնորոշչների, մարզասարքերի և հատուկ սարքավորումների կիրառումը նպաստում է տեսողության խանգարում ունեցող երեխաների տարածական կողմնորոշման զարգացմանը:

## **Հետազոտություններն անցկացվել են երեք փուլով.**

**Առաջին փուլը** (որոնողական) անցկացվել է 2007 թվականին և ուղղված է հիմնախսնդրի հետազոտությանը, գիտանամկավարժական գրականության մեջ և գործնականում դրա մշակվածության ուսումնասիրնան:

**Երկրորդ փուլը** (փորձարարական) անցկացվել է 2007-2010թ.: Այն թույլ տվեց ստանալ չտեսնող և թույլ տեսնող դպրոցականների շարժողական ակտիվության ուղղված խաղային գործունեության գոյություն ունեցող ծերի և տեսակների ազդեցության և նրանց տարածական կողմնորոշման տվյալները: Աշխատանքի այս փուլում անցկացված շարժախաղերի վերլուծությունը թույլ տվեց որոշել դրանց բովանդակության ազդեցությունը տեսողության խանգարումներով երեխանների տարածական կողմնորոշման կարողությունների և հմտությունների զարգացման և շարժողական ակտիվության վրա: Հավաստիացնող գիտափորձների փուլերով որոշվեց չտեսնող և թույլ տեսնող կրտսեր դպրոցականների խաղային գործունեության ժապավեն և շարժողական ակտիվության մակարդակը:

**Երրորդ փուլը** (ընդհանրացնող) անցկացվել է 2011թ.: Վերլուծվել, ընդհանրացվել և ներկայացվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել են հիմնական եզրակացությունները, ձևավորվել են ատենախոսությունը և հավելվածը:

Հետազոտության /2007-2010թ./ մասնակցել են 86 առաջինից չորրորդ դասարանցիներ: Փորձարկվող 15 երեխանները չտեսնող էին (17.4%), իսկ մյուսները՝ 71-ը (82.6%) թույլ տեսնողներ, ովքեր հնարավորություն ունեին կողմնորոշվելու ոչ միայն շրջակա միջավայրում, այլև տեսնելու մոտ տեղադրված առարկաները, կարդալու և գրելու՝ օգտագործելով նաև հարթ տառատեսակը:

**Հետազոտության արդյունքների հիմնավորումն ու հավաստիությունն ապահովված է հետազոտվողների բավարար քանակակազմով, անցկացված աշխատանքի ծավալով, հետազոտության ժամանակակից և համապատասխան մեթոդների կիրառմաբ, փաստացի փորձարարական նյութի մանրազնին վիճակագրական մշակմամբ:**

Ատենախոսության հիմնական դրույթների հիմնավորումն ու ձգգրտությունը երաշխավորված է նաև հեղինակի հրատարակումներով, գեկույցներով, ստացված արդյունքների վերլուծության հրապարակային քննարկումներով և դրանք դպրոցական պրակտիկա ներդնելու փաստերով:

**Հետազոտության արդյունքների փորձարկում:** Ատենախոսության առանձին դրույթներ, արդյունքներ և հետևողություններ գեկուցվել են Խ.Արովյանի անվան ՀՊՄՀ Հատուկ մամկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստերում /2008-2012թ./ և Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխանների թիվ 14 հատուկ դպրոցի մանկավարժական խորհրդում (2010-2012թ.):

**Ատենախոսության կառուցվածքն ու ժապավեն:** Ատենախոսությունը շարադրված է 170 էջ համակարգչային տեքստով, կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և

հավելվածից: Աստենախոսության տեքստը պարունակում է 17 աղյուսակ, 17 նկար և 6 հավելված:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**ՆԵՐԱԺՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱԳՎԱԾ ԵՆ ԻԵՏԱԳՈՒԹՈՒԹՅԱՆ ՕԲԵԿՏԸ, ԱՉԱՐԼԱՆ, ՎԱՐԿԱԾԸ, ԱԿԱՏՈՍԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳԻՏՈՎԱԿԱՆ ՆՈՐՈՎՅԹԸ, ՄԵՏԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ Աշանակությունը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:**

**ԱՍԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ առաջին՝ «ՀԻՄՆԱԿԱՆՈՒԻ ԴՐԱՄՔԸ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՄԵՏՈՂԴԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ» գլխում վերլուծվում է գիտամեթոդական գրականությունում տվյալ հիմնախնդրի մշակվածության աստիճանը, տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման զարգացման ժամանակակից մոտեցումները, որոշվում է խաղի դերը տեսողության խանգարումով երեխաների տարածական կողմնորոշման զարգացման համակարգում, ինչպես նաև տրվում է հետազոտության տեսանկյան հիմնավորումը:**

Ապացուցված է, որ շարժախաղերը տեսողության խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների դաստիարակության և փոխհատուցման գործընթացի ձևավորման կարևոր պայման են հանդիսանում: Գրականության տվյալները և գործնականում կատարված աշխատանքները ցույց են տալիս, որ շարժախաղերն այդ երեխաների համար կարող են հանդես գալ նաև որպես տարածական կողմնորոշման զարգացման կարևոր միջոց:

Այս գլխում ներկայացված հետազոտության արդյունքները վկայում են, որ տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման զարգացման համար շարժախաղերը գործնականում գրեթե չեն կիրարվում: Այս հիմնահարցի տեսական և գործնական ոչ լիարժեք մշակվածությունը զգալիորեն դժվարացնում է ուսուցիչների, դաստիարակների, ինչպես նաև ծնողների կողմից իրականացվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշմանը: Դրանից էլ բխում է այս հիմնահարցի ուսումնասիրման և մշակման անհրաժեշտությունը:

**ԱՍԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՒԴ՝ «ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԾԱԿԱՆ ԿՈՄՄՈՐՈՇՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐՁՅԱԼԵՐԻ ՈՒԽՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՐԺԱՆԱՊԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ» գլխում ներկայացված են տեսողության խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների տարածական կողմնորոշման և շարժողական ոլորտի խանգարումների հիմնական բնութագիրը, հասուլ դպրոցում կիրարվող շարժախաղերը, այս երեխաների տարածական կողմնորոշման զարգացմանն ուղղված շարժախաղերի կազմակերպման և անցկացման հարցերի վերաբերյալ ուսուցիչների, դաստիարակների տեղեկացվածության մակարդակի հետազոտության արդյունքները, ինչպես նաև շարժախաղերի միջոցով չտեսնող**

և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման գարգացման մոտեցումները:

Հաստատված է, որ մանկական տարիքում տեսողության կորուստը կամ դրա խանգարումները բացասաբար են անդրադարձնում շարժողական ոլորտի գարգացման և տարածական կողմնորոշման վրա: Այս են վկայում 112 փորձարկվողների քայլքի և վազքի հետազոտության արդյունքները:

Սոցիարգման արդյունքները վկայում են, որ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոցի ուսուցիչների միայն 45,4%-ն ունի համեմատաբար լավ տեղեկացվածության մակարդակ այս երեխաների տարածական կողմնորոշման գարգացմանն ուղղված շարժախաղերի կազմակերպման ու անցկացման մասին:

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների դպրոցական ծրագրում ընդգրկված և հատուկ դպրոցում կիրառվող շարժախաղերի վերլուծությունը վկայում է, որ վերջիններիս անցկացման դինամիկան պայմանավորված է ոչ միայն դրանց բովանդակությամբ, այլ նաև չտեսնող և թույլ տեսնող դպրոցականների շարժողական և խաղային գործողությունների, տարածության մեջ կողմնորոշվելու կարողության գարգացման աստիճանով: Ըստ որում տարածական կողմնորոշման գարգացմանն ուղղված շարժախաղերի ծրագրային նյութը գրեթե չի նախատեսում ծայնային կողմնորոշչների, տարբեր առարկաների, հատուկ մարզասարքերի և սարքավորումների օգտագործումը: Մինչեւ շարժախաղերում այդ միջոցների լայն կիրառումը ճիշտ քայլքի վազքի, ձեռքերի, ոտքերի համաձայնեցված շարժումների, սողական մնկալման, շարժողական-մկանային զգայության հիմք է դառնում, որը չտեսնող և թույլ տեսնող երեանների տարածական կողմնորոշման գարգացման գործնրացում բացարկի կարևոր նշանակություն ունի:

Սոցիարգման արդյունքները վկայում են, որ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոցի 22 ուսուցիչների միայն 45,4%-ն ունի համեմատաբար լավ տեղեկացվածության մակարդակ այս երեխաների տարածական կողմնորոշման գարգացմանն ուղղված շարժախաղերի կազմակերպման ու անցկացման մասին:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում հարցմանը մասնակցած 81 ուսուցիչների 4,5%-ը, Խ.Արույանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետի 112 բարձր կուրսեցինների 31,7%-ը համեմատաբար լավ պատկերացումներ և տեղեկացվածության բարձր մակարդակ ունեին ուսումնասիրվող հարցի վերաբերյալ:

Շարժախաղերի միջոցով չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման գարգացման մոտեցումների ուսումնասիրությունն անլիարժեք կլինի առանց առարկայական և արտադասարանական միջոցառումների անցկացման բովանդակության մանկավարժական վերլուծության: Այս նպատակով առաջինից չորրորդ դասարանների ֆիզիկական կոլտությայի դասաժամերի անցկացման վերլուծությունը, չտեսնող և թույլ տեսնող երեխաների խաղային գործունեության դիտումը ազատ ժամերին վկայում է, որ խաղի նախապատրաստման, բացատրման և կազմակերպման համար

հատկացվում է շատ ժամանակ, խաղերը ֆիզկոլտուրայի դասաժամերի ոչ բոլոր մասերում են անցկացվում, յուրաքանչյուր երեխայի անհրաժեշտ է հատուկ ներգրավել խաղի մեջ և այլն: Այս ամենը խաղի ժամանակ որոշակի դժվարություններ է առաջացնում տարածական կողմնորոշման համար:

Ցոյց է տրված, որ տարածական կողմնորոշման զարգացումը շարժախաղերի միջոցով բարդացված է՝ պայամնավորված՝ ոչ միայն այս երեխաների տեսողության խանգարումներով, սահմանափակ շարժողական հնարավորություններով, այլ նաև այս հարցերի ոչ բավարար մշակվածությամբ: Այդ իսկ պատճառով հատուկ, լրացուցիչ միջոցների կիրառման մոտեցումների մշակումը (ձայնային կողմնորոշչիններ, տարբեր առարկաներ, տեխնիկական միջոցներ և սարքավորուներ) կնպաստի այս երեխաների տարածության մեջ ճիշտ կողմնորոշվելուն, ինչն էլ կիրառա նրանց շարժողական ակտիվության և ինքնուրույնության զարգացման հիմքը:

**Առենախոսության երրորդ՝ «ԶՏԵՍՆՈՐ և ԹՈՒՅ ՏԵՍՆՈՐ ԴՐՈՅՑԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՍ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԱԲ ՏԱՐՎՈՂ ՇԱՐԺԱԿԱՆԵՐԻ ԿԱԶՍԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄԵՑԿԱՑՄԱՍ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՄԵԹՈՂՆԵՐԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» գլխում** ներկայացված են մեկայա մանկավարժական գիտափորձի արդյունքները, վերլուծվել են չտեսնող և թոյլ տեսնող կրտսեր դպրոցականների տարածական կողմնորոշման զարգացմանն ուղղված շարժախաղերի միջոցներով ուսուցանող մեկայա մանկավարժական գիտափորձի արդյունքները: Ցոյց է տրված տեսողության խանգարումներով երեխաների լսողական մնկալման, շարժումների համաձայննեցման, շարժողական և լսողական հիշողության, մկանաշարժողական զգայությունների զարգացմանն ուղղված տարբեր տեսակի առարկաների, ձայնային կողմնորոշչինների, մարզասարքերի և սարքավորումների կիրառմանը շարժախաղերի անցկացման առաջարկվող մանկավարժական մոտեցումների արդյունավետությունը: Այս ամենի հիման վրա կառուցվել է չտեսնող և թոյլ տեսնող կրտսեր դպրոցականների խաղային տարածությունում կողմնորոշվելու կարողությունների և հմտությունների զարգացումը:

Հաստատված է, որ շարժախաղերում առարկաներով գործողությունների կիրառումը (ձայնային գնդակ, տարբեր չափսերի գնդակներ, օդակներ, դրոշակներ և այլն) նպաստում է չտեսնող և թոյլ տեսնող կրտսեր դպրոցականների խաղի նկատմամբ հետաքրքրության, շարժողական ակտիվության բարձրացմանը, կորորդինացիայի, շարժումների ճշտության զարգացմանը: Այսպիսով, մինչև ուսուցանող գիտափորձը խաղին հատկացված ժամանակի 30 րոպեից 15 րոպե 20 վայկանը (50,7%) ծախսվում էր խաղի կանոնների բացատրման, երեխաներին խաղի մեջ ներգրավելու, անհրաժեշտ դադարների վրա, և բուն խաղի անցկացմանը մնում էր ժամանակի ընդամենը 49,3%: Մնակաարժական գիտափորձի ավարտին այս ժամանակը փոքր-ինչ փոխվեց, հատկապես փորձարարական խմբում, որտեղ խաղին հատկացված ընդհանուր ժամանակի 70,7% կազմում էր խաղային գործողությունների կատարումը (այսուակ 1):

## Այլուսակ 1

### Փորձարկվողների հետ անցկացվող շարժախաղերին հատկացվող ժամանակը մանկավարժական գիտափորձի տարբեր փուլերում

Փորձարկվողներ	Խաղաղ ժամանակը /րոպե/	Զբաղվածությունը խաղի մեջ	Հետազոտվող խմբեր							
			Փորձարական n=12				Սուլգողական n=11			
			Մինչ գիտափորձ	Գիտափորձի հետո	Մինչ գիտափորձ	Գիտափորձի հետո	բաց.	%	բաց.	%
Չտեսնողներ	30	Բացատրում	9.0	30.0	7.20	24.0	9.0	30.0	8.40	28.0
		Խաղ	13.0	43.3	19.50	65.0	13.0	43.3	13.50	45.0
		Դադար	8.0	26.7	3.30	11.0	8	26.7	8.10	27.0
Թույլտեսնողներ	30	Բացատրում	7.0	23.3	5.0	16.7	7.0	23.3	6.0	20.0
		Խաղ	16.50	55.0	23.0	76.6	16.0	53.3	17.0	56.7
		Դադար	6.50	21.7	2.0	6.7	7.0	23.3	7.0	23.3
Ընդամենը	30	Բացատրում	8.0	26.7	6.10	20.3	8.0	26.7	7.20	24.0
		Խաղ	14.40	48.0	21.20	70.7	14.50	48.3	15.30	51.0
		Դադար	7.20	24.0	2.30	7.7	7.50	25.0	7.50	25.0

Այս տվյալները վկայում են այն մասին, որ փորձարարական խմբի տեսողության խանճաղումներով երեխաները շարժախաղերում առարկաներով գործողություններ կատարելու հաշվին ձեռք բերեցին տարածական կողմնորոշման գործնական կարողություններ և հմտություններ: Նրանք սովորեցին ճիշտ կողմնորոշվել ըստ ձայնի և տրվող ազդանշանի /սուլիչ, ձայնային գնդակ, արջկեց զանցողի քայլեր/ և այլն/ առավել համաձայնեցված գործողություններ կատարել խաղներոց հետ: Այսպիսով, եթե մինչև մանկավարժական գիտափորձի անցկացումը 2 հետազոտվող խմբերի 23 չտեսնող և թույլտեսնող երեխաներից 19 (82,6%) չեին կարողանում ճիշտ կողմնորոշվել խաղում, հաճախ կանգ էին առնում, շփոթում էին ուղղությունը, օգնություն էին խնդրում, ապա մանկավարժական գիտափորձի վերջում փորձարարական խմբի երեխաների 75%-ը սովորեցին ինքնուրույն կողմնորոշվել տարածությունում, առարկաներով վարժ գործողություններ կատարել, փոխանցել ընդունել դրանք, որոշել գործողության ուղղությունը: Ստորգողական խմբի երեխաների մոտ այս ցուցանիշները ավելի թույլ էին արտահայտված. միայն 11 երեխաներից 4-ը (36,3%) ունեին կողմնորոշման

աննշան հմտություններ, իսկ նրանցից մեծամասնությունը չէին կարողանում ճիշտ որոշել ուղղությունը, տեղաշարժվել խաղային հրապարակում:

Եվ այսպես, անցկացված հետազոտության արդյունքները թույլ են տալիս նշել, որ շարժախաղերում տարբեր տեսակի առարկաներով գործողությունների կատարումը դրական ազդեցություն ունի չտեսնող և թույլ տեսնող երեխաների կողրդինացիայի, շարժումների ճշտության, ձկունության, մկանաշարժողական զգայությունների զարգացման վրա, ինչն էլ նպաստում է այս երեխաների տարածական կողմնորոշման, ինքնուրուցյան և շարժողական ակտիվության զարգացմանը: Անցկացված հետազոտության արդյունքները նաև վկայում են, որ շարժախաղերում ձայնային կողմնորոշչինների կիրառումը (ձայնային փարոս, ձայնային գնդակ, առջևից գնացողի քայլեր և այլն) նպաստում է բացարձակ չտեսնող և մնացորդային տեսողությամբ չտեսնող երեխաների տարածական կողմնորոշման զարգացմանը (աղյուսակ 2):

## Աղյուսակ 2

**Փորձարկվողների տարածական կողմնորոշման կարողությունների համեմատական ցուցանիշները ըստ ձայնային կողմնորոշչինների կիրառվող 15մ վազքի շարժախաղերում**

Փորձարկվողներ	Հետազոտության փուլեր	Փորձարարական խմբեր						
		15մ վազքի ժամանակ ձայնի աղբյուրից շեղումը /սմ/		Տարբեր ւրումը				
		Փորձարարական	Ստուգողական					
		X	±	m	X	±	m	
Բացարձակ չտեսնողներ	Մինչ գիտակործը	105.2	±	1.62	104.3	±	1.57	0.9
	Գիտակործից հետո	32.4	+ 0.65		86.5	±	1.21	54.1
	Տարբերությունը	72.8			17.8			55.0
	%	69.2			17.1			52.1
Մնացորդային տեսողությամբ չտեսնողներ	Մինչ գիտակործը	101.8	±	1.26	102.7	±	1.44	0.9
	Գիտակործից հետո	27.3	±	0.12	81.7	±	1.09	54.4
	Տարբերությունը	74.5			21.0			53.5
	%	73.2			20.4			52.8
Միջին ցուցանիշ	Մինչ գիտակործը	103.5	±	1.19	103.5	+ 1.50		-
	Գիտակործից հետո	29.8	±	0.14	84.1	±	1.15	54.3
	Տարբերությունը	73.6			19.4			54.2
	%	71.2			18.7			52.5


Աղյուսակից երևում է, որ եթե մինչև գիտակործը 15մ վազքի ժամանակ երկու հետազոտվող խմբերի 28 փորձարկվողների կենտրոնական գիծից շեղումը միջինում կազմում էր 103,5 սմ, ապա շարժախաղերում ձայնային

կողմնորոշչների կիրառումը, մանկավարժական գիտափորձի վերջում, զգալիորեն բարձրացրեց վազքի առաջադրանքի կատարումը հատկապես փորձարարական խմբի չտեսնող երեխաների մոտ: Այսուեւ վազքույու կենտրոնական գծից շեղումը կազմում էր ընդամենը 29,8 սմ., ինչը 73,6 սմ. (71,2%) պակաս էր մինչև փորձարարական տվյալներից: Ստուգողական խմբում այս ցուցանիշներին ավելի արտահայտված էին. 19,4սմ. (18,7%):


Ուսուցանող մանկավարժական գիտափորձում մեծ մասը հատկացվել է չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման և ժամանակի պատկերացումների ծևավորմանը՝ հիմնվելով մարզասարքերով և հատուկ սարքավորումներով խաղային գործողությունների կատարման վրա: Մանկավարժական գիտափորձի այս փուլում մենք կիրառել ենք հետևյալ մեթոդական հնարները. տեսողական, շոշափողական, լսողական ժամորթացում ժամանակի չափման միավորներին, առաջադրանքների կատարում որոշակի ժամանակահատվածում, խաղային գործողությունների կատարում «նավակ» մարզասարքի վրա («Ճանապարհորդություն գետի վրայով», «մրցույթ այլ նավակների հետ»):

Ցույց է տրված չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու զարգացման մոտեցումները: Այսպիսով, մինչև գիտափորձը երկու հետազոտվող խմբերի 29 փորձարկվողները իրենց զբաղացությունը մարզասարքերի վրա որոշել են 3րոպե 52վրկ. սխալը հրական հատկացված ժամանակից (8րոպե) կազմում է 4,07րոպե (51,6%): Մոտավորապես այսպիսի ցուցանիշներ գրանցվեցին հետազոտվողների հանգստի ժամանակի գրանցման դեպքում՝ մարզասարքի վրա խաղային առաջադրանքներ կատարլուց հետո: Մեր կողմից առաջարկվող մոտեցումների կիրահան արդյունքում կողմնորոշման այս ցուցանիշները ժամանակի ընթացքում զգալիորեն բարելավվեցին՝ հատկապես փորձարարական խմբում (նկար 1):

Այսպիսով, մանկավարժական գիտափորձի վերջում փորձարարական խմբում առաջադրանքի կատարման և հանգստի ժամանակի որոշման մեջ սխալը հրական հատկացված ժամանակից կազմում էր ընդամենը 17,7% և 13,3%, համապատասխանաբար, ինչը 34,4% և 35,0%-ով պակաս էր թան մինչև գիտափորձը: Ստուգողական խմբում այս փոփոխությունները առավել թույլ էին արտահայտված: Պարզ է դաշնում, որ առաջադրանքների կատարումը մարզասարքերի վրա պյուժետային խաղի ձևով, դրական ազդեցություն ունի տեսողության խանգարումներով երեխաների տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու զարգացման վրա:



**Ձեռքբերով շարժումների կատարում  
թիավարման մարզարքի վրա**



### **Առաջադրանքի կատարումից հետո հանգիստ**

**Նկար 1.** Փորձարկվողների ժամանակի մեջ կողմնորոշվելու կարողության համեմատական ցուցանիշները գործունեության տարբեր ձևերի ժամանակ:

Հաստատված է, որ մանկավարժական գիտափորձի ծրագրում հատուկ սարքավորմների (քայլքի համար նախատեսված փորձարական ուղեգործ, աստիճաններ) վրա առաջադրանքների և վարժությունների կատարումը նույնպես նպաստում է չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարծության մեջ կողմնոշմանը քայլքի ժամանակ տարբեր պայմաններում։ ուղիղ, բարձրանալ և իջնել, կողմնորոշվելով առջևից գնացողի քայլերով։ Փորձարական խմբի

Երեխաների մոտ մանկավարժական գիտափորձի վերջում մինչ գիտափորձի տվյալների հետ համեմատած զգալիորեն բարելավված էին տարածական կողմնորոշման բոլոր ցուցանիշները. ուղիղ գծով քայլքը, համձնարարված գծով անցնելու ժամանակը և այլն: Այս ցուցանիշները վկայում են, որ տվյալ վարժությունների և առաջադրանքների կատարումը հասուկ սարքավորումների վրա նպաստում է տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման այնպիսի կարևոր բաղադրիչների զարգացմանը, ինչպիսիք են ուղղագիծ քայլքը, քայլի երկարության և շարժման արագության մեծացումը: Այս կարողությունների և հմտությունների կատարելագործումը վկայում է չտեսնող և թույլ տեսնող երեխաների սեփական ուժերում վստահության, տարածական կողմնորոշման զարգացման մասին:

Այսպիսով, անցկացված հետազոտության արդյունքները վկայում են, որ շարժախաղերում առարկաներով գործողությունների, ձայնային կողմնորոշչների կիրառումը, մարզասարքերի և հասուկ սարքավորումների վրա խաղային առաջադրանքների կատարումը նպաստում են չտեսնող և թույլ տեսնող կրտսեր դպրոցականների տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու կարողության զարգացմանը:

Վերոնշյալը հաստատում է մեր կողմից առաջարկվող մոտեցումների արդյունավետությունը:

## ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված բազմածավալ հետազոտությունը թույլ է տալիս կատարել հետևյալ հետևողությունները.

1. Շարժախաղերը հանդիսանում են կրտսեր դպրոցականների շարժողական ունակությունների զարգացման համակարգային միջոց, սակայն դրանք լայն կիրառություն չունեն տեսողության խանգարումներով երեխաների հետ տարվող աշխատանքում: Սա ոչ միայն այս երիտարարի տեսողության խանգարման, շարժողական ակտիվության ցածր մակարդակի, այլև խաղային գործունեության ընթացքում տարածական կողմնորոշման զարգացման մերողների, միջոցների և պայմանների անբավարար մշակվածության հետևաք:

2. Տեսողության խանգարումներով կրտսեր դպրոցականները ոչ միայն չեն կարող ինքնուրույն կազմակերպել խաղը, այլ նաև ոչ միշտ են ունակ մասնակցելու կազմակերպված խաղին: Կատ տեսողությունը (կամ բացակայությունը), վախճ տարածության նկատմամբ և դրանում կողմնորոշվելու անկարողությունը խոչընդոտում են այս երեխաների ինքնուրույն՝ առանց կողմնակի օգնության խաղալու կարողությունների զարգացմանը, որի արդյունքում էլ նրանք վատ են ընկալում շարժախաղի պայմանները, չեն կարողանում արագ ներգրավվել խաղի մեջ, կողմնորոշվել խաղային

իրավիճակում, սեփական գործողությունները համաձայնեցնել խաղընկերների գործողություններին:

3. Մեր կողմից փորձարկված և առաջարկված շարժախաղերը բարձացնում են տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման զարգացման ուղղված շտկողական աշխատանքների արդյունավետությունը՝ դրանց կազմակերպման ձևերի, բովանդակության և մեթոդական գործիքակազմի մշակման շնորհիվ:

4. Պարզվել է, որ շարժախաղերի կիրառման արդյունավետությունը բարձր է, եթե՝

- դրամցում կիրավում են հատուկ սարքավորումներ, մարզասաքեր,
- շարժախաղերում կիրավում են տարբեր առարկաներ, խաղային գործողություններ, ձայնային կողմնորոշչներ,
- հաշարվում է տեսողության խանգարման տեսակը, աստիճանը, տեսողական հնարավորությունները, տարածական կողմնորոշման, տարիքային և անհատական առանձնահատկությունները:

5. Շարժախաղերում տարբեր տեսակի առարկայական գործողությունները (ձայնային գնդակներ, դրոշակներ, օդակներ, պարաներ և այլն) խթանում են չտեսնող և թույլ տեսնող երեխաների կողորինացիային, շարժումների հստակությանը և ձկունությանը, ինչն անմիջականորեն կապված է տարածական կողմնորոշման կարողությունների և հմտությունների ձևավորման հետ: Այսպիսով, եթե մինչ ուսուցանող գիտափորձը փորձարկվողների միայն 17.3%-ն էր կարողանում ճիշտ կողմնորոշվել խաղային տարածությունում, ապա գիտափորձի վերջում չտեսնող և թույլ տեսնող երեխաների 75%-ը սովորեց ինքնուրույն կողմնորոշվել, առարկայական գործողություններ կատարել, փոխանցել և ընդունել դրանք: Դա նպաստեց այն բանին, որ խաղին հատկացված ժամանակի մեջ մասը (70.7%) ծախսվեց արդեն խաղին մասնակցելու, մինչեւ նախքան գիտափորձը ժամանակի մեջ մասը ծախսվում էր բացատրության, ցուցադրման, պարզաբանման, սխալների ուղղման վրա և այլն:

6. Տեսողության խանգարումներով երեխաների տարածական կողմնորոշման կարողությունների զարգացման ուղղությամբ անցկացվող շարժախաղերում կիրավող ձայնային կողմնորոշչները նպաստում են ձայնային աղբյուրի միջոցով և հիշողությամբ տարածության մեջ կողմնորոշվելուն: Այսպիսով, տարածության մեջ կողմնորոշվելու ժամանակ մանկավարժական գիտափորձի վերջում 71.2%-ով կրճատվեց 15մ վազքի ժամանակ ձայնային աղբյուրից շեղվելու մեջությունը, հիշողությամբ 15մ վազքի ժամանակ 58.8%-ով նվազեց սխալների քանակը:

7. Տեսողության խանգարումներով երեխաների տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու կարողության զարգացմանն առավել նպաստում են մարզասարքերի և հատուկ միջոցների վրա կատարվող խաղային գործողությունները: Այսպիսով, մանկավարժական ուսուցանող գիտափորձի վերջում խաղային գործունեությամբ զբաղվելու ժամանակի որոշման սխալը կազմում էր ընդամենը 17.7%, որը 34.4%-ով պակաս էր, մինչ գիտափորձի

տվյալներից: Զգալի բարելավում է նկատվում տարբեր պայմաններում տեղաշարժվելիս տարածական կողմնորոշման ժամանակ: Այսպիսով մանկավարժական գիտակործի վերջում չտեսնող և թույլ տեսնող երեխաների 15մ վայրէջքով, վերելքով, հիշողությամբ և ուղիղ քայլքի ժամանակ քայլի երկարությունը և տեղաշարժման արագությունը միջինում մեծացավ 5.4սմ-ով և 30վրկ.-ով, քայլքի ուղիղ գծից շեղումը կրճատվեց 8.8 սմ:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱԾԽԱՏԱՄԱՔՏԵՐԸ**

1. Մուրադյան Ս.Վ. Տեսողական խանգարում ունեցող երեխաների հետ իրականացվող շարժախաղեր՝ որպես նրանց արատները փոխսկառուցող գործնքների իրականացման պայման: Հասուկ մանկավարժություն և հոգեբանություն, միջբուհական գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Երևան, 2008, էջ 37-41:

2. Մուրադյան Ս.Վ. Խարակերտիկա игровой деятельности слепых и слабовидящих учащихся. Հասուկ մանկավարժություն և հոգեբանություն, Միջբուհական գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Երևան, Զանգակ-97, 2009, էջ 198-201:

3. Մուրադյան Ս.Վ. Շարժախաղի դերը տեսողության խանգարում ունեցող երեխաների տարածության մեջ կողմնորոշման գործնքներում, ժողովածու պրոֆ.-դաս.-ական անձնակազմի, ասավիրանուների, հայցրողների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի (2009թ. նոյեմբերի 19-21)՝ նվ.՝ Խ.Աքովյանի ծննդյան 200 ամյակին, լ պրակ, , «Մանկավարժ», Երևան, 2010, էջ 150-152:

4. Մուրադյան Ս.Վ. Տեսողության խանգարում ունեցող երեխաների տարածության մեջ կողմնորոշման խնդիրը հասուկ կրթության համակարգում: Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊԿ հիմնադրման 40-ամյակին: Ստեփանակերտ, 2010, էջ 159-160:

5. Մուրադյան Ս.Վ. Տեսողության խանգարում ունեցող երեխաների տարածական կողմնորոշման զարգացման առանձնահատկությունները, Հասուկ մանկավարժություն և վերականգնողական հոգեբանություն գիտական հանդես, Երևան 2011, էջ 39-41:

МУРАДЯН СУСАННА ВАЛЕРЬЕВНА

**РАЗВИТИЕ ОРИЕНТИРОВКИ В ПРОСТРАНСТВЕ С ПОМОЩЬЮ  
ПОДВИЖНЫХ ИГР У ДЕТЕЙ С НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.03 - „Специальная педагогика”.

Защита диссертации состоится 10-го апреля 2014г. в 14:00 часов на заседании специализированного совета 020 ВАК „Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абояна по адресу: 375010, Ереван, ул. Тигран Мец, 17.

**РЕЗЮМЕ**

**Актуальность исследования**- Известно, что применение подвижных игр для развития умений и навыков ориентировки в пространстве у детей с нарушением зрения имеет важное практическое значение. Вместе с этим недостаточная теоретическая и практическая разработанность этой проблемы увеличивает трудности применения подвижных игр в специальной школе для развития ориентировки в пространстве у незрячих и слабовидящих детей, подбора педагогических средств организации и проведения этой работы. Поэтому экспериментальная разработка средств и методов применения подвижных игр для развития ориентировки в пространстве у детей с нарушением зрения определяет проблему исследования как весьма актуальную, имеющую важную теоретическую и практическую значимость.

**Цель исследования** – разработать средства и методы применения подвижных игр для развития ориентировки в пространстве у детей с нарушением зрения.

**Задачи исследования.**

1. Изучить современные подходы развития ориентировки в пространстве у детей с нарушением зрения.
2. Определить уровень развития ориентировки в пространстве у незрячих и слабовидящих младших школьников.
3. Разработать средства и методы применения подвижных игр с целевой направленностью на развитие ориентировки в пространстве у детей с нарушением зрения и экспериментально обосновать их эффективность.

**Научная новизна исследования** состоит в выявлении характера и содержания подвижных игр, применяемых в специальной школе, предпосылок развития ориентировки в пространстве средствами подвижных игр, уровня информированности учителей и воспитателей в изучаемых вопросах, а также в разработке средств и методов проведения подвижных игр для развития ориентировки в пространстве у незрячих и слабовидящих детей.

**Теоретическая значимость** исследования заключается в теоретическом обосновании эффективности применения рекомендованных средств и методов развития ориентировки в пространстве средствами подвижных игр у детей с нарушением зрения, а так же полученных результатов исследования. Материалы диссертации дополнят специальную педагогику и тифлопедагогику новыми теоретическими сведениями.

**Практическая значимость** диссертации состоит в разработке и внедрении в школьную практику содержания и методических подходов для развития ориентировки в пространстве средствами подвижных игр у незрячих и слабовидящих младших школьников. В результате проведенных исследований предложены средства, методы и педагогические подходы по подбору, организации и проведению подвижных игр с различными предметами, с опорой на звуковые ориентиры и т.д., с целевой направленностью на развитие ориентировки в пространстве у детей с нарушением зрения.

**Во введении** - определены объект, предмет, гипотеза, цель, задачи и методы исследования, представлены научная новизна, теоретическая и практическая значимость работы и основные положения выносимые на защиту.

**В первой главе** - раскрываются постановка проблемы, задачи, методы и организация исследования, представлена степень ее разработанности.

**Во второй главе** - представлены результаты изучения предпосылок развития ориентировки в пространстве средствами подвижных игр у младших школьников с нарушением зрения.

**В третьей главе** - раскрываются средства, методы и условия организации и проведения подвижных игр с незрячими и слабовидящими младшими школьниками, экспериментально обоснована их эффективность.

В диссертации представлены также выводы, список использованной литературы, приложение и акт о внедрении результатов исследования в педагогическую практику.

По теме диссертации опубликовано пять статей.

MURADYAN SUSANNA VALERI

**THE DEVELOPMENT OF THE ABILITY OF SPATIAL ORIENTATION OF CHILDREN WITH VISUAL IMPAIRMENTS**

A dissertation for application to Scientific Degree for Candidacy in Pedagogical Sciences with the specialization of 13.00.03 – “Special Pedagogy”

The defense of the dissertation will take place on April 10, 2014, at 14:00, at the meeting of the Specialized Pedagogical Committee “Pedagogy” 020 HAC for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (address: 17 Tigran Mets street, 375010, Yerevan, Armenia).

**SUMMARY**

**The Relevance of the Research.** It is known that application of active games for development of skills of spatial orientation of children with visual impairments has important practical value. At the same time the insufficient theoretical and practical readiness of this problem increases difficulties to use active games for development of spatial orientation in special schools for children with visual impairments, and organization and choice of pedagogical strategies to implement them. Therefore experimental development of means and methods of using active games for spatial orientation development of children with visual impairments defines the research problem as very urgent, having important theoretical and practical importance.

**The aim of the research** is to develop means and methods of using active games for development of spatial orientation of children with visual impairments.

**Research problems are:**

1. To elaborate new approaches of development of spatial orientation of children with visual impairments
2. To define the development level of spatial orientation for primary school children with visual impairments.
3. To develop means and methods of using active games for development of spatial orientation of children with visual impairments and to experimentally prove their efficiency.

**The scientific novelty of the research** is the identification of the character and content of the active games used in special school, prerequisites of development of spatial orientation means of active games, level of knowledge of

teachers and tutors, as well as development of means and methods of using active games for development of spatial orientation of children with visual impairments.

**The theoretical value of the research** is theoretical reasoning and elaboration of efficiency of using the recommended means and methods and active games for development of the spatial orientation of children with visual impairments as received results of the research. Materials of the thesis will enrich Special Pedagogy and Typhlopedagogy with new theoretical data.

**The practical value of the research** is the practical elaboration of the content and methodological approaches for development of spatial orientation of children with visual impairments through active games. As a result of the conducted research methods and pedagogical approaches to choose and organize these active games by various items, with a support on sound reference points, etc., are suggested for development of spatial orientation of children with visual impairments.

**In Introduction** the object, the subject, a hypothesis, the purpose, tasks and research methods are defined, the scientific novelty, the theoretical and practical significance of research and main propositions are presented for defense.

**In the First Chapter of the Thesis** the problem statement, research objectives, methods and the research organization are revealed, the degree of its readiness is presented.

**In the Second Chapter of the Thesis** results of the study of preconditions of development of spatial orientation of primary school children with visual impairments through active games are presented.

**In the Third Chapter of the Thesis** the means, methods and settings of organization and implementation of active games for development of spatial orientation of primary school children with visual impairments are revealed and their efficiency is experimentally proved.

The references, bibliography, the act of the results of the research in the pedagogical process are introduced in the work.

5 articles are published on the subject matter of the dissertation.

